# ՇՎԵԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

«Հայաստանյան Էկումենիկ Եկեղեցական Փոխատվական Ֆոնդ» Փոխատվական Հիմնադրամը (ARM ECLOF) հոկտեմբերի վերջին հյուրընկալել էր Շվեդական Եկեղեցու պատվիրակությանը, որոնց Հայաստանում գտնվելու առաքելությունն էր՝ ուսումնասիրել երկրում ԷԵՓՀ-ի աշխատանքը և հանդիպել նրանց հետ, ովքեր փոխառություն էին ստացել Հիմնադրամից:

Հանդիպումն սկսվեց ՀԷԵՓՖ ՓՀ-ի աշխատանքներին և ապագա ծրագրերին ծանոթանալով:

Հաջորդ չորս օրերի ընթացքում խմբի անդամները ծրագրերի իրականացմանը ծանոթացան տեղերում, հանդիպեցին հիմնադրամի փոխառությամբ աշխատող գյուղացիական խմբերին և կազմակերպություններին:

Այս շրջագայությունների ընթացքում հյուրերը տեսան, թե ինչպես է ԷԵՓՀ փոխառությունը օժանդակել մարդկանց ընդարձակելու իրենց տնտեսությունը և բարելավելու իրենց կենսապայմանները: Այս այցելություններից հետո Շվեդիայի մեր գործընկերներն ասացին, որ իրենք շատ տպավորված են կատարված աշխատանքներով և հայտնեցին իրենց զարմանքը, թե ինչպես է հնարավոր այսպիսի արդյունքների հասնել փոքր միկրովարկային փոխառություններ ստանալով:

Այցելության վերջում պատվիրակությանն ընդունեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունը հայտնեց Շվեդական Եկեղեցու, ՀԷԵՓՖ ՓՀ-ի և Միջազգային ԷԵՓՀ միջև առկա համագործակցության համար:

Հայաստանում գտնվելու վերջին օրը շվեդական պատվիրակությունը հանդիպեց պաշտոնապար տարբեր անձանց Կառավարությունում, ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակում և հասարակական կազմակերպություններում, որտեղ այցելության հիմնական նպատակն էր՝ ծանոթանալու Աղքատության նվազեցման տարբեր ռազմավարություններին, որն իր հերթին հնարավորություն տվեց Շվեդական Եկեղեցու ներկայացուցիչներին տեսնելու, թե որքան սերտորեն է ՀԷԵՓՖ Փոխատվական Հիմնադրամը համագործակցում երկրում գտնվող տարբեր կազմակերպությունների հետ:

Մենք շատ ուրախ էինք հյուրընկալելու մեր շվեդացի գործընկերներին, և ինչպես հյուրերը խոստովանեցին, իրենց ձեռք բերած փորձառությունը բավականին արժեքավոր էր:

*ԱՐՄԻՆԵ ԲԱՂՐԱՄՅԱՆ*
*ԷԿԼՈՖ-ի գրասենյակ*